www.acrpc.am

Իրավական մշակույթ

Ubi societas ibi jus

երկշաբաթաթերթ
թիվ 14 (17)
2007 թ. նոյեմբերի 15

ՊԱՏՎԻՐԱՆՆ ԱՊՐԵԼ Է ՊԵՏՔ

Շատ մարդկանց գիտակցության մեջ այն միտքն է կարծրացած, թե մարդու իրավունքների պաշտպանությունը սոսկ տուժողի իրավունքների պաշտպանությունն է: Բայց երբ խորամուխ ենք լինում «իրավագիտակցություն» հասկացության բովանդակության մեջ, բառի երկրորդ արմատը հուշում է, որ խնդիրն ավելի շատ հոգևորին է առնչվում, քան օրենքին:

Մինչ այժմ մարդն առավելապես արժևորվել է որպես հասարակական անձ, ոչ որպես հոգևոր էակ: Մարդու հոգևոր սկիզբն անտեսվել է, և որպես արժեք՝ ֆետիշացվել է նրա էության սոցիալ-հասարակական կողմը: Ժամանակակից կացութաձևի այն միտումը, թե օրենքի հանդեպ վախը հասարակական ներդաշնակ հարաբերությունների ձևավորման գրավական կարող է

լինել, վերջիվերջո, կարող է կործանման պատճառ դառնալ այդ նույն կացութաձևի համար, որովհետև պատմական փորձը ցույց է տալիս, որ գոյություն չունի ժողովրդավարության այնպիսի մեխանիզմ, որ ունակ լինի տևական կայուն հասարակական մթնոլորտ ապահովել, եթե այն չի արժևորում մարդու հոգին և սիրտը՝ ներքին մարդուն: Իհարկե, կան բարոյական արժեքներ, որ ձևավորում են հասարակական անհատի որոշակի կերպար, սակայն բարոյական արժեքները, որպես կանոն, սովորույթի վերածվելու հակում ունեն՝ կորցնելով իրենց հոգևոր իմաստը: Բարոյական արժեքները կենսունակ են, եթե մարդն ապրում է նրանցով, ոչ թե պահպանում դրանք որպես ծես կամ նախնիների ժառանգություն: Եթե մարդու դաստիարակության խնդիրը մնում է հասարակության մեջ տիրապետող բարոյական նորմերի հույսին, ապա դա ձախողում է, քանզի գործ ունենք մի երևույթի հետ, երբ մարդն ակամա ծնվում է նախորդ սերունդների ձևավորած բարոյական ճշմարտությունների մեջ, և միայն սակավաթիվ մարդկանց հոգիներում են այդ արժեքներն ընկալվում որպես հոգևոր ինքնաճանաչման երևակումներ:

Օրենքն իր հոգևոր շերտն ու ներքին ճշմարտությունն ունի: Ամենահատկանշական օրինակը Նոր կտակարանում է. Քրիստոսն օրենք և պատվիրան հասկացությունները գիտակցական նոր աստիճանի բարձրացրեց: Օրինակ՝ նա ասում է, որ շնանալը և լոկ ցանկությունը հավասարազոր մեղքեր են: Այս աստվածային դրույթը յուրաքանչյուր հասարակության համար պետք է ելակետ լինի՝ որպես ճանապարհ դեպի բարձրագույն օրենք՝ ազատություն:

Մեր իրականության մեջ ընդունված է օրենքի մեխանիկական պահպանումը, որի շարժիչ ուժը օրենքի հանդեպ վախն է: Բայց անտեսվում է այն իրողությունը, որ մարդու փրկությունը ոչ թե օրենքի հանդեպ երկյուղն է, այլ նախ իրավական դաստիարակությունը՝ այնպիսի բան չանելը, ինչը չես ցանկանում, որ ուրիշները քեզ անեն. այդ չանելը պետք է սիրուց լինի, ոչ թե որպես պատժի սպառնալիքի հետևանք, այլ որպես ներքին կյանք: Սրանք ներքին վիճակներ են, ինչը վախի ազդեցությամբ հնարավոր չէ ձևավորել:

Այսուհանդերձ, մի նրբագույն հանգամանք կա. դաստիարակություն հասկացությունը հաճախ հասարակաբուծության իմաստով է կիրառվել, մանավանդ այնպիսի հասարակարգերում, որոնք միագիծ գաղափարախոսությամբ են առաջնորդվել: Ներկա պետական հանրակրթական ծրագիրը ևս աղերսներ ունի վերոնշյալ իրողության հետ: Օրինակ՝ հասարակագիտական առարկաների դասագրքերում սովորողին մեծ մասամբ ներկայացվում են պատրաստի, մարսված մտքեր, ընկալումներ՝ ասես գրքի սահմաններից դուրս ինքնուրույն ստեղծագործ մտածողության որևէ հնարավորություն բացառելու նպատակով: Մինչդեռ էական տարբերություն կա անհատին ինչ-որ բանի շուրջ մտածել հրավիրելու և նրան որևէ մտածողություն պարտադրելու միջև: Գաղափարախոսական ցանկացած իրողություն այդ ոլորտում կրթության միայն պատրանք է ստեղծում:

Մարդը՝ որպես անհատ, ազատ է լոկ իր հոգևոր մտածողության մեջ, և նրա կենսական խնդիրն այդ մտածողությունը «ներմուծված» ընկալումներից շղթայազերծելն է՝ իր ներսում Աստծո նմանությունը վերականգնելու, ինքն իրեն ճանաչելու համար: Սուրբգրային պատվիրանները հաճախ դիտվել են որպես տաբու, դոգմա, երբ չի հասկացվել նրանց՝ դեպի կամքի և մտածողության ազատությունը ուղեղիշ լինելու իմաստը: Նույնիսկ շատ բարեպաշտ մարդիկ ընդամենը պատվիրանների հետևորդներ են եղել, ոչ թե պատվիրաններն ապրողներ: Մի բան է գիտակցել՝ ինչ է սերը, ընկալել այն որպես աստվածային պատվեր, մի այլ բան՝ ապրել այդ սերը՝ որպես ինքնաճանաչման բացարձակ զգացում:

Անվիճելի է այն փաստը, որ իրավական խնդիրները հոգևոր հիմք ունեն: Անցել են այն ժամանակները, երբ մարդկությունն իր մանկության շրջանն էր ապրում, առաջնորդվում ծնողի «չի կարելի»-ով: Երբ մարդկությունը Քրիստոսից հետո դարձյալ հակվում է դեպի հասարակական օրենք՝ կորցնելով նրա հոգևոր իմաստը, ապա մեղանչում է իր հոգու, պատմության և ազատության առջև. մեղքի մեծագույն բաժինն այն հասարակարգինն է, որում ապրում է տվյալ անհատը:

Անկասկած, կառավարման հեշտագույն ձևը ամբոխավարությունն է, երբ հասարակության յուրաքանչյուր անդամի մեջ արմատավորված են մտածողության միևնույն սկզբունքներն ու չափանիշները, երբ մտածողության անհատական ստեղծագործ կողմը հասցված է նվազագույնի, երբ մարդուն գաղափարախոսական ճշմարտություն է պարտադրված, երբ ֆետիշն է օրենքը, երբ օրինապահությունը լոկ քաղաքացիական պարտավորություն է, ոչ թե հոգևոր վիճակ: Սա մեր իրականության բնութագիրն է:

Ազատ անհատ-քաղաքացիներ ունենալու համար պետությունը հանրակրթության ուժով պետք է մշակի այնպիսի սկզբունքներ, որոնք անհատին առաջնորդեն դեպի ինքնաճանաչում: Այդ սկզբունքները պետք է ելնեն մարդկության պատմական և հոգևոր փորձից, իսկ փորձը մեկ միասնական ճշմարտությամբ միշտ էլ մեզ հուշում է, որ պատվիրանը, խրատը, օրենքը ոչ թե պահպանել, այլ ապրել է պետք:

ԳՆԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ

Թեգուզ իմանաս, գիդենաս աստղերու համբարքը սիրուն.
Անբարի գործը կորած է՝ կարթա հարանց վարքը սիրուն.
Ավիտարանի խոսկիրը մարքարիտ է, կարքը՝ սիրուն...

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում — էջ 2
Ազատականացված շուկայական տնտեսության հզոր ջատագովը — էջ 3
Համաշխարհային նոր մրցանիշ — էջ 3
Օդագնացության սպասարկման բարելավման ճանապարհին — էջ 4
Իրավական ակտեր — էջ 5
Հայկական պարարվեստի լեգենդը — էջ 6
Խաչակնքվելու խորհուրդն ու կարգը — էջ 6
Սուրբ Դիոնիսիոս Արիոպագացու վարքը — էջ 7
Տեղեկույթ, ազդ, հայտարարություններ — էջ 8

Իրավունքը և մարդու իրավունքներն աշխարհում

«Հարկ է, որ կառավարությունները մեծ ուշադրություն դարձնեն հանրակրթական դպրոցներում Մարդու իրավունքների կրթությանը»

Գլխավոր փոխնախագահ Ֆելիսիա Թիլբրոքը ներկայացնում է համաժողովի աշխատանքի վերաբերյալ իր եզրակացությունները

2006 թ. հունվարին Եվրոպայի խորհուրդը, ՅՈՒՆԵՍԿՈ-ն և ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարի գրասենյակը Եվրախորհրդի անդամ 46 երկրների կրթության նախարարներին ուղարկել էին մի նամակ, որում հորդորում էին նրանց ավելի շատ ջանքեր գործադրել Մարդու իրավունքների կրթության Գործողությունների առաջին փուլի (2005-2009 թթ.) իրագործման համար: Մարդու իրավունքների կրթության համաշխարհային ծրագիրը եվրոպական մակարդակում վերահսկվելու է Եվրոպայի խորհրդի կողմից: Առաջին փուլում նախատեսվում է Մարդու իրավունքների կրթությունը ներառել դպրոցական տարրական և միջին օղակներում:

2007 թ. նոյեմբերի 5-6-ին Ստրասբուրգում՝ Եվրոպայի խորհրդի պալատում, կայացավ Մարդու իրավունքների կրթության համաշխարհային պլանի քննարկման եվրոպական տարածաշրջանային հանդիպում, որին ներկա էին շուրջ 300 մասնակիցներ 56 երկրներից՝ պետական պաշտոնատար անձինք, միջազգային կազմակերպությունների, կրթական հաստատությունների, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Բացմանը ողջույնի խոսքով ելույթ ունեցողները կարևորեցին Մարդու իրավունքների շարունակական կրթությունը, որը պետք է իրականացվի ողջ կյանքի ընթացքում:

Հանդիպման հիմնական նպատակն էր՝ օժանդակել Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ անդամ երկրներին Մարդու իրավունքների կրթության ոլորտում՝ ազգային պլանների իրագործման և ստանձնած մյուս պարտավորությունների կատարման ուղղությամբ, ինչպես նաև խթանել անդամ երկրների ակտիվ համագործակցությունը գործողությունների պլանի իրագործման հարցում:

Ստրասբուրգյան հանդիպման խնդիրներն էին.

1. ներկայացնել և լուսաբանել Մարդու իրավունքների կրթության ազգային փորձառությունները՝ ձեռքբերումները, խնդիրները, դժվարությունները, քննարկել լուծումների հնարավոր ուղիները.

2. նպաստել տեղեկության փոխանակմանը, ԵՄ և ԵԱՀԿ անդամ երկրների համագործակցությանը և կապերի ամրապնդմանը.

3. ամրապնդել եվրոպական միջկառավարական կազմակերպությունների համատեղ աջակցությունը.

4. բարձրացնել իրազեկության մակարդակը Մարդու իրավունքների կրթության համաշխարհային ծրագրի գործողությունների պլանի վերաբերյալ.

5. բարձրացնել իրազեկության մակարդակը ձեռնարկվող «Լավագույն փորձի ժողովածուի» ծրագրի վերաբերյալ, որն իրականացվում է ԵԱՀԿ-ի ղեկավարությամբ:

Ամփոփիչ ելույթում Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Թոմաս Համմերբերգը նշեց. «Մենք միաժամանակ և՛ լավատես ենք, և՛ անհամբեր: Հարկ է, որ կառավարությունները մեծ ուշադրություն դարձնեն հանրակրթական դպրոցներում Մարդու իրավունքների կրթությանը»:

Ստրասբուրգում տեղի ունեցած հանդիպմանը Հայաստանից մասնակցել են նաև ՀՄԻԿ նախագահ Գ. Մանուկյանը, Ժողովրդավարական նախաձեռնությունների երիտասարդական կենտրոնի նախագահ է. Մարուքյանը և Երիտասարդական ակումբների դաշնության նախագահ Ա. Միսիթարյանը: Նրանք իրենց ենթախմբերում ներկայացրել են Հայաստանում Մարդու իրավունքների կրթության ոլորտում տարվող աշխատանքները և մասնավորապես՝ Մարդու իրավունքների հայկական դպրոցի գործունեությունը:

էջ 5

Բռնի տեղահանությունները խախտում են միջազգային իրավունքը

«Վերջերս Սուդանի կառավարության կողմից Հարավային Դարֆուրում իրականացված քաղաքացիների տեղահանությունները միջազգային իրավունքի կոպիտ խախտում են»,- զգուշացրել է Մարդու իրավունքների դիտակը (Human Rights Watch): Սուդանի կառավարությունը պետք է դադարեցնի տեղահանումները, անհապաղ տեղեկացնի տեղահանվածների գտնվելու վայրի և վիճակի մասին, թույլատրի մարդասիրական առաքելություն իրականացնող գործակալություններին հաղորդակցվել տեղահանվածների հետ:

Բիրմայում շարունակվում են բռնությունները երեխաների նկատմամբ

«Երեխաներին բառացիորեն գնում ու վաճառում են նրանցով համալրելով Բիրմայի ռազմական ուժերը»
Զո Բեքեր՝ Մարդու իրավունքների դիտակի՝ երեխայի իրավունքների պաշտպան

«Զինված ուժերի սակավության պատճառով Բիրմայի կառավարությունը հարկադրաբար երեխաների է հավաքագրում, որոնցից ոմանք ընդամենը 10 տարեկան են»,- ասել է Մարդու իրավունքների դիտակն իր զեկույցում: Երեխաներին առևանգում են երկաթուղային և ավտոբուսային կայաններում, շուկաներում և հասարակական այլ վայրերում՝ դաժանորեն խոշտանգելով կամ սպառնալով ծերբակալությամբ, եթե հրաժարվեն զինվորագրվել:

Հետաքննությունը պարզել է, որ զինվորական հավաքագրողներն ու քաղաքացիական միջնորդները վարձատրվում են յուրաքանչյուր «նորակոչիկի» համար՝ անգամ նվազագույն տարիքի և առողջության չափահիշների ակնհայտ անհամապատասխանությունների դեպքում:

Ի աջակցություն սեռական բռնություններից տուժածների

Նոյեմբերի 1-ին Սիեռա Լեոնեի Հյուսիսային գավառի Մաքենի քաղաքում կազմակերպվեց զանգվածային երթ, որի մասնակից «Միջազգային համաներում» կազմակերպության անդամները և տեղի հարյուրավոր ակտիվիստներ կոչ արեցին երկրի նորընտիր կառավարությանը՝ ձեռնարկելու միջոցներ և երաշխավորելու արդարություն ու լիարժեք փոխհատուցում սեռական բռնություններից տուժած հազարավոր կանանց:

«Սիեռա Լեոնեի կանանց ու աղջիկների համար այս պատմությունն ավարտված չէ: Նրանք համապատասխան բուժօգնության, արդարադատության համակարգի կողմից պաշտպանվածության, աշխատանքի, նյութական ապահովության և կրթության կարիք ունեն»,- ասել է Տանյա Բերնաթը Սիեռա Լեոնեում «Միջազգային համաներում» կազմակերպության ներկայացուցիչը:

Հյուսիսային Աֆղանստանի ռմբակոծության դատապարտումը

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Լ. Արբորը խստորեն դատապարտել է նոյեմբերի 6-ին Հյուսիսային Աֆղանստանի Բաղլան քաղաքում տեղի ունեցած ռմբակոծությունը, որի հետևանքով զոհվել են առնվազն 41 մարդ, այդ թվում՝ բազմաթիվ երեխաներ և Ազգային ժողովի 6 անդամներ:

«Նման հարձակումները ծաղր ու արհամարհանք են մարդու իրավունքների հանդեպ: Ես հավատում եմ, որ Աֆղանստանի իշխանությունները կանեն հնարավոր ամեն ինչ գործող օրենսդրության համապատասխան» ,- ասել է գերագույն հանձնակատարը՝ ցավակցություն հայտնելով զոհերի ընտանիքներին, Աֆղանստանի կառավարությանն ու ժողովրդին:

Պետք է վերջ դնել կրոնական խտրականությանը

«Եգիպտոսը պետք է թույլ տա իր բոլոր քաղաքացիներին հաստատագրել իրենց իրական կրոնական դավանանքը, եթե կառավարական փաստաթղթերում պահանջվում է կրոնին առնչվող նշում կատարել»,- հայտարարել են Մարդու իրավունքների դիտակն ու անձի իրավունքների գծով եգիպտական նախաձեռնությունը: Երեք կրոնների շրջանակներում սահմանափակվելու կառավարության խտրական վերաբերմունքը Մարդու իրավունքների խախտում է:

Զեկույցում նշվում է, որ Ներքին գործերի աշխատակիցները մարդկանց պարբերաբար խոչընդոտում են պետական փաստաթղթերում, ծննդյան վկայականներում և այլ կարևոր փաստաթղթերում նշում կատարել իրական կրոնի մասին: «Ներքին գործերի աշխատակիցներն ըստ երևույթին կարծում են, թե իրավասու են որևէ անձի դավանանքի վրա բռնանալ՝ վերջինիս դավաճած կրոնը չընդունելու դեպքում»,- ասել է Զո Սթորը՝ Մարդու իրավունքների դիտակի միջինարևելյան և հյուսիսաֆրիկյան ստորաբաժանումների ներկայացուցիչը:

Յուրաքանչյուր եգիպտացի, դառնալով 16 տարեկան, պետք է ստանա ինքնությունը հաստատող պետական փաստաթուղթ՝ հիմնական այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք են բանկային հաշվի բացումը, վարորդական իրավունքի վկայականի ստացումը, աշխատանքի ձեռք բերումը և այլն:

Պակիստանում խաթարվել է ժողովրդավարությունը

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը կոչ է արել Պակիստանի իշխանություններին հաստատել իշխանության ժողովրդավարական ձև, վերականգնել սահմանադրական կարգը՝ կալանքից ազատ արձակելով քաղաքական ակտիվիստներին: Նրանք դատապարտել են այն որոշումները, որոնցով մարդկանց զրկում են մի շարք հիմնարար իրավունքներից, այդ թվում՝ տեղաշարժման և խոսքի ազատության իրավունքից:

«Մենք խորապես անհանգստացած ենք Պակիստանում առկա արտակարգ դրությամբ և դատապարտում ենք Մարդու իրավունքների խախտումները»,- նշվում է հայտարարության մեջ:

Դատական լորդերը սահմանափակում են գաղտնի վկայության՝ որպես ապացույցի կիրառությունը

Հոկտեմբերի 31-ին տեղի ունեցած չորս դատավարությունների ընթացքում Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի դատական հանձնաժողովը (հայտնի է որպես «Դատական լորդեր») վճռեց, որ վերահսկման հրամանագրերը՝ հիմնված միայն գաղտնի վկայության վրա, խախտում են արդար դատավարության իրավունքը:

Դատարանը հաստատեց, որ կասկածյալներին օրական 18 ժամ տնային կալանքի տակ պահելու հրամանագրերը խախտում են ազատության իրավունքը: Այնուամենայնիվ, հաստատվեց այդպիսի կարճաժամկետ հրամանագրեր արձակելու լիազորության օրինականությունը՝ մերժելով այն փաստարկները, թե այդպիսի սահմանափակումները հավասարազոր են քրեական պատժամիջոցների:

Մարդավաճառության դեմ ուղղված գործողությունների դիտորդում

2008 թ. ընթացքում շուրջ 10-15 անկախ փորձագետներ պետք է ձևավորեն մարդավաճառության դեմ ուղղված գործողությունների փորձագիտական խումբ՝ դիտորդելու համար Եվրոպայի խորհրդի կողմից Մարդավաճառության դեմ պայքարի համաձայնագրի դրույթների իրագործումն այն երկրներում, որոնք վավերացրել են այդ համաձայնագիրը:

Փորձագիտական խմբի անդամները պետք է ընտրվեն 4 տարի ժամկետով, Մարդու իրավունքների ոլորտում բարձր բարոյական նկարագիր ունեցող փորձագետների թվից:

Նոյեմբերի 8-9-ին Ստրասբուրգում կայացած Եվրոպայի խորհրդի անդամ երկրների և միջազգային կառավարական մարմինների խորհրդակցության ընթացքում քննարկվել են փորձագիտական խմբի անդամների թիվը, ընտրության չափանիշները, աշխատանքային մեթոդները:

Հիշարժան օրեր

Նոյեմբերի 16 - Հանդուրժողականության միջազգային օր
Նոյեմբերի 20 - Երեխաների միջազգային օր

Մեկք՝ քաղաքացիական հասարակությունը

Ապատականացված շուկայական տնտեսության հզոր ջատագովը

ՏՋՀԿ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը (ՏՋՀԿ) հիմնադրվել է 2001 թ.-ին Երևան քաղաքում:

Առաքելությունն է՝ նպաստել Հայաստանի Հանրապետության զարգացմանը՝ որակյալ հետազոտությունների և տեղեկատվության ապահովման միջոցով:

Անդամակցում է՝ ՔՀՀՑ-ին, ԱՀՀՔ-ին (Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավ):

Ծրագրեր է իրականացնում հետևյալ բնագավառներում.

- տնտեսական զարգացում և կառավարում.
- աղքատության հաղթահարում և եկամուտների բաշխում.
- հանրային քաղաքականություններ և սոցիալական ծրագրեր.
- արդյունավետ կառավարում և հաստատութենական զարգացում.
- մասնավոր հատվածի զարգացում:

Աշխատակազմը բաղկացած է՝ ինը հոգուց:

Նախագահն է Մուշեղ Թումասյանը:

Գործադիր տնօրենն է Գագիկ Թորոսյանը:

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Տպագրիչների 15, բն. 13
հեռ.՝ 374 (10) 54-02-89
374 (10) 54-26-31
հեռապատճեն՝ 374 (10) 54-26-31
էլ. փոստ՝ info@edrc.am
կայքէջ՝ www.edrc.am

ՄՈՒՇԵՂ ԹՈՒՄԱՍՅԱՆ
ՏՋՀԿ նախագահ

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնը սոցիալական, տնտեսական հետազոտությունների և քաղաքականությունների գնահատման ոլորտում մասնագիտացած ոչ քաղաքական, ոչ առևտրային, անկախ ինստիտուտ է:

Առաջնորդվելով համագործակցության, հաստատութենական զարգացման, փորձի և գիտելիքների անընդհատ կուտակման, արհեստավարժության սկզբունքներով՝ կենտրոնը նպատակ է հետապնդում դառնալ տարածաշրջանի ամենազարգացած և հեղինակավոր անկախ հետազոտական ինստիտուտներից մեկը, որի գործունեությունը կծառայի և կնպաստի Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Ավելի քան յոթնամյա գործունեության ընթացքում ՏՋՀԿ-ն իրականացրել է մի շարք արդյունավետ ծրագրեր, իսկ որոշ մասնագիտական հրապարակումներ մեծ հետաքրքրություն են վայելում թե՛ Հայաստանում, թե նրա սահմաններից դուրս:

Կենտրոնի կայքէջը հրապարակումներին զուգահեռ ներկայացնում է առցանց վիճակագրության մեծագույն շտեմարաններից մեկը տարածաշրջանում. կայքէջն ունի ամսական շուրջ 15.000 այցելուներ՝ աշխարհի գրեթե 65 երկրներից:

Կենտրոնը «Քաղաքացիական հասարակության համագործակցության ցանցի» շրջանակներում մասնակցում է Հայաստանում աղքատության կրճատմանն ուղղված ծրագրերին, արդյունավետ կառավարմանն ուղղված քաղաքացիական հասարակության ջանքերին:

ՏՋՀԿ-ի հիմնադիր անդամները երիտասարդ տնտեսագետ-գիտնականներ են, ովքեր կարևոր պաշտոններ են զբաղեցնում զանազան ոլորտներում: Կենտրոնի աշխատակազմը, ի լրումն պետական կառավարման և միջազգային կառույցներում աշխատող փորձառու մասնագետների, համալրվում է նաև երիտասարդ հեռանկարային մասնագետներով:

ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն (USAID), Մեծ Բրիտանիայի միջազգային զարգացման բաժին (DFID), ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (UNDP), Համաշխարհային բանկ (WB), Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank (ADB), Օքսֆամ ԲԲԿ (Oxfam GB), «Օքսֆամ» ԲԲԿ-ի նիդեռլանդական մասնաճյուղ (Novib), Կառավարման և տեխնոլոգիաների հարցերով խորհրդատվական ծառայություն (Bearing Point), Բարենցի խումբ (Barents Group), Բուզ Ալեն Համիլթոն համաշխարհային ռազմավարության և տեխնոլոգիաների հարցերով խորհրդատվական ծառայություն (Booz Allen Hamilton), Աջակցող շուկայական խումբ (Emerging Market Group), ՎԷԷՀ և այլ պետական ու ոչ պետական կառույցներ իրենց ծրագրերի իրականացումը վստահել են Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնին:

ՏՋՀ կենտրոնը հպարտ է, որ հանդիսանում է պետական միջամտությունից սահմանափակ ազատականացված շուկայական տնտեսության հզոր քարոզող: Ազատականացված շուկայական տնտեսությունը կարևորվում է երկրի սոցիալական կապիտալի թարմացման տեսանկյունից, ինչն իր հերթին հիմք կդառնա կայուն աճի համար: Այս մոտեցումն արտացոլված է ՏՋՀ կենտրոնի հավասարակշիռ գաղափարախոսության մեջ:

ՏՋՀ կենտրոնը՝ որպես ոչ քաղաքական հետազոտական կազմակերպություն, անկախ է իշխանություններից, քաղաքական ուժերից և քաղաքականությամբ զբաղվող անհատներից: Այս մոտեցումն առանձնանում է հայաստանյան հետազոտական ինստիտուտների (Think-tank) շուկայում, որի շնորհիվ ՏՋՀ կենտրոնը հուսալի գործընկեր է հետազոտությունների և նման ծառայություններ փնտրողների համար:

ՏՋՀԿ-ն գործունեություն է ծավալում տվյալների հավաքագրման և վերլուծության, հանրային ծրագրերի գնահատման, ստացված արդյունքների հիման վրա սոցիալ-տնտեսական քաղաքականությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման, հասարակության իրազեկության բարձրացման և քարոզչության ուղղությամբ: Այն նաև օժանդակում է ՀՋՆ-ի, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրերի (ԱՀՌԾ) և Միջնաժամկետ ծախսերի ծրագրերի (ՄԺԾԾ) զարգացման և վերանայման ազգային գործընթացներին՝ սերտորեն համագործակցելով Կառավարության և միջազգային կառույցների հետ:

ՏՋՀ կենտրոնը «Տնտեսական քաղաքականություն և աղքատություն» հանդեսի միջոցով ձգտում է խթանել տնտեսական քաղաքականությունների շուրջ քննարկումները և գնահատել դրանց ազդեցությունները: Ամսագիրը մեծ հետաքրքրություն է առաջացրել կառավարական, գիտական և քաղաքացիական հասարակության հնստիտուտների շրջանակներում, ինչպես նաև արտերկրում:

ՏՋՀ կենտրոնն օժանդակում է ուսանողներին, երիտասարդ գիտնականներին և քաղաքացիական հասարակության հնստիտուտներին՝ տրամադրելով միջոցներ և գործիքներ հանրային քաղաքականությունների գնահատման, մասնակցային կառավարման և քարոզչության համար:

ՏՋՀԿ հրատարակությունները

ՏՋՀ կենտրոնի արդյունքներն են՝ հետազոտության արդյունքում ստեղծվող տվյալների շտեմարաններ, մոդելներ և գործիքներ, հետազոտական և վերլուծական հոդվածներ, ամսագիր և թերթեր, ուղեցույցներ և վերապատրաստման նյութեր, ինչպես նաև հեռուստատեսային և ռադիոծրագրեր:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ

Մրցանիշի վկայականը հանձնվում է Կումի Նայդուին

2007 թ. հոկտեմբերի 16-ին և 17-ին «Ելի՛ր և խոսի՛ր ընդդեմ աղքատության և անհավասարության» կարգախոսի ներքո բազմամարդ հավաքույթներ կազմակերպվեցին «Աղքատության հաղթահարման համընդհանուր քարոզարշավի» (ԱՀՀՔ) մասնակիցների կողմից: Կազմակերպված 6540 միջոցառումներին մասնակցեցին 43,716,440 մարդ աշխարհի շուրջ 127 երկրներից: Մասնակցության այս ցուցանիշը գերազանցեց 2006 թ.-ին 23,5 մլն մարդկանց մասնակցությամբ սահմանված աշխարհի մրցանիշը:

Առցանց մամլո ասուլիսի ժամանակ նախնական տվյալների հիման վրա հայտարարվել էր, որ մասնակիցների թիվը կազմում է 38,8 մլն, սակայն արդյունքների ամփոփման ընթացքում պարզվեց, որ հավաքույթներին մասնակցել է 43,7 մլն մարդ: Գրանցված համաշխարհային նոր մրցանիշի վկայականը հանձնվել է «Սիվիկուս» քաղաքացիական մասնակցության համաշխարհային միության գլխավոր քարտուղար Կումի Նայդուին:

Միլիոնավոր մարդիկ ելան աղքատության և անհավասարության դեմ պայքարի՝ ի նպաստ Հազարամյակի զարգացման նպատակների իրագործման: Նրանք բարձրաձայնեցին իրենց պահանջը՝ հնարավորինս շտապ միջոցներ ձեռնարկելու աշխարհում օրեցօր ընդլայնվող աղքատության դեմ: 24 ժամերի ընթացքում աշխարհի տարբեր վայրերում մարդիկ համախմբվեցին՝ պայքարելու աշխարհի բարեկեցության համար, աշխարհ, ուր օրական 50,000 մարդ է մահանում կանխարգելելի հիվանդություններից և այլ խնդիրներից:

Հայաստանը ևս՝ հանձին ԱՀՀՔ հայաստանյան միության, իր ակտիվ մասնակցությունն ունեցավ համաշխարհային քարոզարշավին՝ Հայաստանի տարբեր մարզերից և Երևանի համայնքներից համախմբված 3800 մարդկանց մասնակցությամբ:

Օդագնացության սպասարկման բարելավման ճանապարհին

2001 թ.-ին ՀՀ Կառավարությունը 30 տարի ժամկետով լիզինգային պայմանագիր է կնքել «Ամերիկյան կորպորացիա» արգենտինաամերիկյան ընկերության հետ, որը պատկանում է արգենտինահայ գործարար Էդուարդո Էրնեկյանին: «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲ ընկերությունը 2002 թ.-ի հունիսից հավատարմագրային կառավարմամբ 30 տարով տնօրինում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը:

2007 թ.-ի հունվար - սեպտեմբեր ժամանակաընթացքում մեկնած ուղևորների թիվը կազմել է 542995, և ժամանած ուղևորների թիվը՝ 486279 մարդ: Առաքվել և ներկրվել է 7259 տոննա բեռ, իրականացվել են 5845 թռիչք-վայրէջքներ:

Արտյոմ Մովսեսյան Սերոբ Կարապետյան

Մեզանում շատերն են օգտվում օդանավակայանի ծառայություններից: Ինչպե՞ս են դրանք մատուցվում, ինչպե՞ս է որոշվում ավիաչվերթների սակագնային քաղաքականությունը, արդյո՞ք «Զվարթնոց» օդանավակայանում սպասարկումը համապատասխանում է միջազգային չափանիշներին, ովքե՞ր են երաշխավորում մեր՝ ուղևորներիս անվտանգությունն օդում և երկրի վրա:

«Իրավական մշակույթ» պարբերաթերթի լրագրող Լուսինե Մացակյանն այցելեց ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն (ՔԱԳՎ), ուր մի շարք հանդիպումներ ունեցավ աշխատակիցների հետ՝ փորձելով պարզել քաղաքացիներին առավելապես հուզող հարցերի պատասխանները:

Վարչության մամուլի խոսնակ Գայանե Դավթյանը տեղեկացրեց, որ ավիաչվերթների սակագնային քաղաքականությունը որոշվում է օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի՝ ԻԱՏԱ-ին անդամագրված ավիաընկերությունների կողմից, որի հիմքում ընկած են տվյալ ժամանակաշրջանում շուկայում ձևավորված պահանջարկը, դրա դիմաց ներկայացվող առաջարկն ու չվերթների իրականացման ծախսերը: Համաձայն ԻԱՏԱ-ի դրույթների՝ կանոնակարգված են ձմեռային (նոյեմբերի 1 – մարտի 31) և ամառային (ապրիլի 1 – հոկտեմբերի 31) չվացուցակներ: Երևանն աշխարհի ավելի քան 60 խոշորագույն քաղաքներին են կապում 34 միջազգային ավիաընկերություններ: Օտարերկրյա ավիաընկերությունների մուտքը Հայաստանի Հանրապետություն իրականացվում է միջկառավարական համաձայնագրերի, արձանագրությունների կամ փոխըմբռնման հուշագրերի հիման վրա:

«Զվարթնոց» միջազգային օդանավակայանի սպասարկման ոլորտին վերաբերող հարցերին պատասխանեց Գևորգ Աբրահամյանը՝ «Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ մամուլի քարտուղարը:

Լ. Մ. - Վերջին տարիներին որոշակիորեն բարելավվել են օդանավակայանի սպասարկման ծառայությունները: Ի՞նչ ընթացքի մեջ են բարեփոխումները:

Գ. Ա. - Արդեն ավարտվել է նոր ուղևորային համալիրի շինարարական աշխատանքների առաջին փուլը: Կիրառվել են նորագույն տեխնոլոգիաներ: Ժամանման սրահը ժամում կարող է սպասարկել 1000 ուղևորների, որը երկու անգամ գերազանցում է նախկին համալիրի հնարավորությունները: Երեքից չորս անգամ արագացել է ուղևորների սպասարկման գործընթացը՝ շնորհիվ սրահում տեղակայված 12 անձնագրային ստուգման կետերի (նախկին 6-ի փոխարեն): Ընդհանուր առմամբ «Զվարթնոց» օդանավակայանի բարեփոխումները հաջորդ 30 տարիների համար կպահանջեն 164 միլիոն եվրո գումարի ներդրում: Ներկայումս օդանավակայանը որոշակի չափանիշերով համապատասխանում է ԻԱՏԱ «Բ» մակարդակին: Բացի այդ՝ տեղադրվել են թռիչքներն ազդարարող նոր համակարգ, վերգետնյա սպասարկման հատուկ սարքավորումներ, ուղևորների և ուղեբեռների հաշվառման ժամանակակից ավտոմատ, ինչպես նաև կենսաչափական համակարգեր: Վերանորոգվել են ավտոկանգառները և 2 բարձրակարգ սրահները: Առկա են հարմարավետ ռեստորաններ և հանգստյան սրահներ: Նոր անմաքս առևտրի խանութներն առաջարկում են միջազգային ճանաչում ունեցող ապրանքանիշերի լայն ու հարուստ տեսակի:

Լ. Մ. - Ինչպե՞ս են հարթվում օդանավակայանի անվտանգության աշխատակիցների լիազորությունների և ուղևորների իրավունքների խաչուղիներում ծագող խնդիրները:

Գ. Ա. - Անվտանգության աշխատակիցները գործում են իրենց նորմատիվային դաշտում՝ կատարելով սահմանված պարտականությունները: Անվտանգության աշխատակիցը հստակ գիտի, թե ուղևորն ինչ իրեր իրավունք ունի տեղափոխել, ինչ իրեր՝ ոչ, և որևէ կասկած առաջանալու դեպքում կարող է ուղևորին ավելի մանրազնին ստուգել: Ուղևորը պետք է ըմբռնումով մոտենա այդ գործողություններին՝ գիտակցելով, որ դա արվում է իր իսկ անվտանգության նկատառումներով: Նաև հեղուկների տեղափոխման համար եվրոպական մեխանիզմներին համապատասխան նոր չափանիշներ են մշակվել, որոնց մասին նախազգուշական պաստառներ կփակցվեն՝ հնարավոր խնդիրների ծագումը կանխելու համար:

Լ. Մ. - Բազմաթիվ քաղաքացիների հետաքրքրում է, թե ինչու «Զվարթնոց» օդանավակայանում բեռնասայլակները տրամադրվում են վճարով այն դեպքում, երբ գրեթե բոլոր երկրներում այդ ծառայությունն անվճար է:

Գ. Ա. - Որոշ երկրներում, օրինակ՝ Փարիզի օդանավակայաններում, ուղևորները «սիմվոլիկ» գումար են գցում հատուկ նախատեսված արկղիկի մեջ և վերցնում բեռնասայլակը, և այն վերադարձնելու դեպքում կարող են ետ վերցնել իրենց վճարած գումարը: «Զվարթնոց» օդանավակայանում բեռների տեղափոխման համար սայլակների տրամադրման ծառայությունը պայմանագրային հիմունքներով իրականացնում է "Card Service" ընկերությունը: Սայլակները տրամադրվում են 400 դրամ վճարի դիմաց: Հույս ունենք, որ հետագայում մեզ մոտ նույնպես այս ծառայությունն անվճար կդառնա, դա պարզապես ժամանակի խնդիր է:

Լ. Մ. - Բազմաթիվ քաղաքացիների հետաքրքրում է նաև այսպես կոչված «օդի հարկը», որը նույնպես բացառիկ հայկական երևույթ է:

Գ. Ա. - Դա կառավարության որոշումով է սահմանված: Գումարը գանձվում է օդանավակայանի տարածքում, բայց փոխանցվում է պետական բյուջե:

Լ. Մ. - Ահաբեկչությունը կարծես դարի հիվանդություն է դարձել, և հաճախ ահաբեկիչների թիրախը օդանավակայաններն են ու հիքնաթիռները: Որքանո՞վ է ապահովված մեր ուղևորների անվտանգությունն օդանավակայանում:

Գ. Ա. - ՀՀ օդանավակայաններում ավիացիոն անվտանգության գործառույթները՝ ուղևորների, ուղեբեռների, բեռների, փոստի, օդանավերի անձնակազմերի անդամների զննման, օդանավերի և ավիացիոն օբյեկտների պահպանության, օդանավակայանների վերահսկելի և հատուկ վերահսկելի գոտիներում անցագրային վերահսկողության իրականացման աշխատանքները, ինչպես նաև անօրինական միջամտությունների դեպքում դրանց կանխմանն ու հակազդմանն ուղղված գործողությունները իրականացվում են օդանավակայանները շահագործող ընկերությունների ավիացիոն անվտանգության ծառայությունների միջոցով, ո՝ որոնք հանդիսանում են անհրաժեշտ անձնակազմով, տեխնիկայով, կապի և տրանսպորտային միջոցներով, զենքով: Օդանավակայանի անվտանգության համակարգը հագեցած է 150 տեսախցիկներով, որոնք հնարավորություն են տալիս հետևելու այն ամենին, ինչ տեղի է ունենում շենքի ներսում և շենքից դուրս:

Թռիչքի մեջ գտնվող հիքնաթիռի ուղևորների անվտանգության հիմնական երաշխավորողներն անձնակազմի անդամներն են և օդային երթևեկության կառավարման կարգավարները:

Լ. Մ.- Որտե՞ղ է անձնակազմը ստանում մասնագիտական կրթություն, և արդյո՞ք այն համապատասխանում է միջազգային չափանիշներին:

Հարցին պատասխանեց ՔԱԳՎ Թռիչքային անվտանգության տեսչական վարչության պետ պրն. Սերոբ Կարապետյանը:

Ս. Կ. - ՔԱԳՎ-ին կից գործում է «Ավիաուսումնական կենտրոն» ՓԲԸ-ն, որը նախապատրաստում է բորտուղեկցորդների, օդային երթևեկության սպասարկման կարգավարների, ավիացիոն անվտանգության աշխատակիցների, իսկ այս տարվանից կենտրոնում իրականացվում են նաև սիրողական և կոմերցիոն օդաչուների նախապատրաստման եռամյա դասընթացներ: Սա առաջին քայլն է Հայաստանում օդաչուներ նախապատրաստելու խնդիրը լուծելու ուղղությամբ, քանի որ ներկայումս աշխատում են դեռևս խորհրդային շրջանում մասնագիտացած օդաչուները, ինժեներատեխնիկական կազմը և օդային երթևեկության կառավարման կարգավարները: Նրանք ամեն տարի վերապատրաստվում են Եվրոպայում. օրինակ՝ Անգլիայում և Չեխիայում նրանք անցնում են լեզվական պատրաստվածություն, Airbus ընկերության կողմից վերապատրաստվում են Թուլուզում և Ստոկհոլմում, իսկ Դուբայում վարժանքներ են իրականացնում հատուկ վարժասարքերի վրա, որոնք վերահսկվում են հրահանգչի կողմից: Այսպիսով օդաչուները պատրաստ կլինեն իրական վտանգ ներկայացնող միջադեպերին: Ինչ վերաբերում է օդանավի տեխսպասարկմանը, այն իրականացվում է օդանավը շահագործողի կողմից: Մինչ գործարկելը օդանավ արտադրողն այն նախագծում և լիցենզավորում է, որից հետո ավիաընկերությունը ստանում է օդանավը և իրականացնում դրա տեխսպասարկումը՝ միջադեպերի ու պատահարների մասին մշտապես տեղեկացնելով ՔԱԳՎ-ին, որն իրականացնում է վերահսկումը օդանավի շահագործման ողջ ընթացքում:

Լ. Մ. - Իսկ ինչպե՞ս է իրականացվում աշխատանքի գնահատումը:

Ս. Կ. - 2007 թ.-ին ՀՀ ՔԱԳՎ-ն անցավ ԻԿԱՕ-ի աուդիտ: ԻԿԱՕ-ն քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն է, որի նպատակներն են թռիչքային և ավիացիոն անվտանգության ապահովումը և միջազգային քաղաքացիական ավիացիայի զարգացումն ամբողջ աշխարհում: ՀՀ-ն ԻԿԱՕ-ին անդամակցում է 1992-ից և արդեն 2 անգամ 2001-ին և 2003-ին, անցել է աուդիտ: 2007 թ.-ի աուդիտն իրականացվեց նոր ծրագրով՝ 1500 դրույթների և մոտ 10000 չափանիշների կատարման մասով: Աուդիտի արդյունքում չնչին դիտողություններ են արձանագրվել, որոնք առնչվում էին հիմնականում փաստաթղթային ձևակերպումներին: Եթե աուդիտ անցած 63 պետությունների հաշվարկային թերությունների միջին տոկոսային հարաբերությունը կազմել է 40%, ապա Հայաստանում այն կազմել է ընդամենը 4%, այսինքն՝ 10 անգամ պակաս: Նման հիանալի արդյունքի հնարավոր եղավ հասնել միայն հետևողական աշխատանքի շնորհիվ:

Ս. Կարապետյանը եզրափակեց զրույցը՝ մաղթելով բոլոր ուղևորներին միայն անվտանգ և անփորձանք թռիչքներ ու վայրէջքներ:

ՀՀ քաղաքացիական ավիացիայի մասին հավելյալ տեղեկությունների համար այցելե՛ք www.aviation.am :

Իրավական ակտեր

Հարգելի՛ ընթերցողներ, «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթն այսուհետև պարբերաբար ձեզ կներկայացնի մարդու, քաղաքացու կենսական շահերին, առօրյա կարիքներին առնչվող հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր՝ օրենքներ, որոշումներ, կանոնադրություններ և այլն: Եթե ձեզ հետաքրքրում են որոշակի իրավական ակտեր, ապա կարող եք ձեր առաջարկությունները ներկայացնել խմբագրություն:

Ստորև տպագրում ենք Հայաստանի Հանրապետության Կառավարության N 818-Ն որոշումը՝ Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 հունիսի 2007 թվականի N 818-Ն
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԽՈՂ՝ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ոստիկանության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

1) մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռօրյա ժամկետում հաստատել մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրության և մարդու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին գրավոր ծանուցման ձևերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ վարչապետ Ս. Սարգսյան
2007 թ. հուլիսի 25, ք. Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
հունիսի 14-ի N 818-Ն որոշման
Ց Ա Ն Կ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԽՈՂ՝ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

1. Մարդու իրավունքները սահմանափակելիս մարդն իրավունք ունի՝

1) սահմանափակման պահից իմանալու իր իրավունքների սահմանափակման պատճառները, հիմքերը, իր իրավունքները սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով հատուցում ստանալու իրեն պատկանող տրանսպորտային կամ այլ միջոցներին՝ ոստիկանության ծառայողի կողմից օգտագործման հետևանքով պատճառված վնասի համար:

2. Մարդու ազատությունները սահմանափակելիս մարդն իրավունք ունի.

1) սահմանափակման պահից իմանալու իր ազատության սահմանափակման պատճառները, հիմքերը, իր ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը.

2) ստանալու իրավաբանական օգնություն.

3) բացատրություններ տալու փաստաբանի ներկայությամբ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց.

4) ծանոթանալու իր իրավունքների ու ազատությունների սահմանափակմանն անմիջականորեն առնչվող փաստաթղթերին կամ նյութերին.

5) պահանջելու, որպեսզի ոստիկանություն բերելու պահից սկսած՝ երեք ժամվա ընթացքում իր գտնվելու վայրի մասին տեղեկացվի իր կողմից ընտրված անձին.

6) անհրաժեշտության դեպքում ստանալու բժշկական օգնություն.

7) պահանջելու օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել իր ազատության սահմանափակման կապակցությամբ իր կամ ընտանիքի անդամների կյանքին, առողջությանը, գույքին սպառնացող վտանգը վերացնելու, ինչպես նաև իր տիրապետման տակ գտնվող՝ առանց հսկողության մնացած գույքը պահպանելու նպատակով.

8) ծանոթանալու իր ազատության սահմանափակման օրինականությունը և հիմնավորվածությունը բողոքարկելու կարգին, ոստիկանության գործողություններն ու որոշումները բողոքարկելու վերադասության կարգով կամ դատախազին կամ դատարան.

9) ոստիկանություն բերվելիս իր պահանջով ստանալու իրավունքների մասին իր համար հասկանալի լեզվով գրավոր ծանուցում.

10) պահանջելու, որպեսզի իրեն թույլ տան օգտվելու իր իրավունքներից՝ դրա մասին գրավոր դիմելով իր ազատությունը սահմանափակած ոստիկանության ծառայողին:

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2007 թվականի
հունիսի 14-ի N 818-Ն որոշման
Կ Ա Ր Գ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԻՑ ԲԽՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին մարդուն ծանուցելու ընթացակարգը:

2. Մարդու իրավունքը սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը, և բանավոր ծանուցում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի N 818-Ն որոշման 1-ին կետով հաստատված ցանկի (այսուհետ՝ ցանկ) 1-ին կետով նախատեսված իրավունքները:

3. Մարդու իրավունքները սահմանափակելիս իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրություն չի կազմվում:

4. Մարդու ազատությունը սահմանափակելիս ոստիկանության ծառայողը ներկայանում է՝ հայտնելով իր պաշտոնը, կոչումը և ազգանունը, և բանավոր ծանուցում է ցանկի 2-րդ կետով նախատեսված իրավունքների մասին:

5. Մարդուն ոստիկանություն բերելուց անմիջապես հետո կազմվում է իրավունքների բանավոր ծանուցման մասին արձանագրություն, որում նշվում են արձանագրությունը կազմող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, ծանուցման վայրը, ժամանակը, այն մարդու անունը, ազգանունը, ում ազատությունը սահմանափակվել է, սահմանափակման պատճառը, այն իրավական ակտը, որի հիման վրա ազատությունը սահմանափակվել է, նշում ազատության սահմանափակումից բխող իրավունքների ծանուցման փաստի, իրավունքների իրականացման կարգի պարզաբանման մասին: Արձանագրությունն ստորագրվում է ոստիկանության ծառայողի և այն անձի կողմից, ում ազատությունը սահմանափակվել է: Վերջինիս է տրամադրվում արձանագրության մեկ օրինակը: Արձանագրության ստորագրումից անձի հրաժարվելու դեպքում այն ստորագրում է ոստիկանության ծառայողը՝ արձանագրության մեջ նշելով հրաժարման մասին:

6. Մարդուն՝ իր ցանկության դեպքում տրվում է գրավոր ծանուցում և դրա մասին նշվում է սույն կարգի 5-րդ կետով նախատեսված արձանագրության մեջ: Եթե մարդը չի տիրապետում հայերենին, ապա գրավոր ծանուցումը տրվում է նրան հասկանալի լեզվով: Գրավոր ծանուցման մեջ նշվում են ծանուցվողի անունը, ազգանունը, ազատությունը սահմանափակելու պատճառը, այն իրավական ակտը, որի հիման վրա ազատությունը սահմանափակվել է, ազատությունը սահմանափակող ոստիկանության ծառայողի պաշտոնը, կոչումը, ազգանունը, ցանկի 2-րդ կետով նախատեսված իրավունքները, ծանուցման օրը, ամիսը և ամսաթիվը: Գրավոր ծանուցումն ստորագրում է ծանուցող ոստիկանության ծառայողը՝ նշելով իր պաշտոնը, կոչումը, ազգանունը:

7. Ցանկով նախատեսված իրավունքների մասին գրավոր ծանուցումը ոստիկանության ծառայողին չի ազատում օրենքով նախատեսված այլ իրավունքների մասին մարդուն ծանուցելու պարտականությունից:

ՀՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

«Հարկ է, որ կառավարությունները մեծ ուշադրություն դարձնեն հանրակրթական դպրոցներում Մարդու իրավունքների կրթությանը»

էջ 2

Քննարկումների արդյունքում պարզվել է, որ երկրների մեծ մասում Մարդու իրավունքների կրթությունն իրականացվում է այլ առարկաների ծրագրերում ներառված: Պարզվել է, որ, փաստորեն, միայն Հայաստանում է, որ «Մարդու իրավունքներ» առարկան դասավանդվում է որպես առանձին առարկա:

Խմբագրության կողմից: Այո, մենք գիտենք, որ Մարդու իրավունքները Հայաստանում շատ են խախտվում: Գիտենք, որ այլ երկրներում ևս խախտվում են՝ ավելի շատ կամ ավելի քիչ: Կան երկրներ, որոնց քաղաքական գործիչներն աշխարհի տարբեր ատյաններում «փայլուն կերպով» ներկայացնում են իրենց հանձնառությունն ու գործերը Մարդու իրավունքների և Մարդու իրավունքների կրթության ոլորտներում՝ հաճախ առանց շոշափելի, իրական արդյունքների: Բայց փաստը մնում է փաստ, որ Հայաստանում վերջին 5-10 տարիների ընթացքում Մարդու իրավունքների կրթության ոլորտում համարձակ ու առաջադեմ քայլեր են կատարվել: 2001 թ. որպես առանձին առարկա «Մարդու իրավունքներն» ընդգրկվեց պետական ուսումնական ծրագրում և դեռևս դասավանդվում է որպես այդպիսին հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներում:

Հանրապետությունում, ընդ որում՝ ոչ մայրաքաղաքում, այլ Լոռու մարզկենտրոն Վանաձոր քաղաքում 1996 թ.-ից գործում է Մարդու իրավունքների հայկական դպրոցը, որը հավակնություն և կարողություն ունի տարածաշրջանում դառնալ Մարդու իրավունքների կրթության, խաղաղության ու ժողովրդավարության մի փարոս:

Սակայն որքան էլ տարօրինակ է ու անսպասելի, կրթության ոլորտի «բարեփոխիչներն» անցած տարի նախ կրճատեցին առարկայի առանց այդ էլ պակաս դասաժամերը և այնուհետև մտադիր են «Մարդու իրավունքները» ջնջել առանձին առարկաների ցանկից՝ այն դարձնելով առանձին թեմա «Հասարակագիտություն» կոմունիստական կարոտախտ հիշեցնող անվանումով առարկայի մեջ:

Իրոք, տարօրինակ է. ոմանք անուններն են գրում առանց գործերի, մենք, գործերն ունենալով, ջնջում ենք անունները:

ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ է ԸՆԹԵՐՑՈՂԸ

«Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի 2007 թ. սեպտեմբերի 30-ի (N11) համարում տպագրված «Անպատկառությունն արվեստում չափորոշիչ չէ» վերնագրված խմբագրականին արձագանքել է ՀՀ Արագածոտնի մարզի Օրգով գյուղից մեր ընթերցող, «Իրավունք» առարկայաշարի ուսուցիչ Էդգար Չաթոյանը:

Նամակագիրը քննում է հայկական կինոարտադրության ներկա անմխիթար վիճակը և քննադատում մասնավորապես «Սի վախեցիր» ֆիլմի իմաստազուրկ բովանդակությունն ու անպարկեշտ լեզուն, որ, իսկապես, հարիր չէ հայ ժողովրդի ազգային նկարագրին:

Նամակը տպագրում ենք կրճատումներով:

«Ես կիսում եմ Ձեր մտահոգությունը և ցավում մեր կաթվածահար եղած կինեմատոգրաֆիայի համար:

Իհարկե, այս ամենը խիստ մտահոգիչ է, բայց կարծում եմ, որ շարժանկարի հեղինակները փորձել են ակնդիրներին ցույց տալ մեր հասարակությունում կատարվող դեպքերի իրական նկարագիրը:

Մի՞թե մեր շրջապատում չկան շարժանկարի գլխավոր հերոսի նման մարդիկ, որոնց ուղղակիորեն ստիպում են կատարել իրավախախտումներ, և նրանք երբեմն հայտնվում են այնպիսի իրավիճակներում, որ պարտադրաբար խախտում են հասարակական կարգը կամ օրենքը՝ հենց օրինապահ մարմինների կամայականությունների պատճառով:

Ի՞նչ անի անհատը, երբ մեր հայրենիքում ամենուր խախտվում են մարդու իրավունքները, նվաստացվում է մարդկային արժանապատվությունը:

Տվյալ դեպքում հույսը մնում են իրավապաշտպան կառույցները, ինչպիսին, օրինակ, ՀՍԻԿ-ն է կամ Հելսինկյան կազմակերպությունը, որոնց մասին, ցավոք, մեր հասարակությունը քիչ է իրազեկված»:

Հարգանոք՝ Է. Չաթոյան

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակների դափնեկիր, Հայաստանի պարարվեստի գործիչների միության նախագահ
ՎԱՆՈՒՇ ԽԱՆԱՄԻՐՅԱՆԻ ծննդյան 80-ամյակի առթիվ

Ավանդույթներով հարուստ հայ ժողովուրդը պարարվեստի զարգացման երկար ճանապարհ է անցել: Հայկական պարերը հատկանշվում են ազգային առանձնահատկություններով. դրանցում առաջնային է ոգին, հայի խիզախ, անպարտ և աննկուն ոգին, որ զորություն է պարգևել նրան տարբեր իրավիճակներում:

Բեմում պետք է արտահայտվի ժողովրդի ոգին, հոգեկան կերտվածքը, կերպարը, բնավորությունը: Ոիթմի, մեղեդու, ճկունության, տարազների, պարի մեջ պետք է արտացոլվի հայի բազմահազարամյա կերպարը՝ խանդավառելով թե հայրենիքի, թե սփյուռքի և թե այլազգի հանդիսատեսին:

«Ասես մի ամբողջ ժողովուրդ է պարում բեմում»,- ասել է ամերիկացի աշխարհահռչակ բեմադրիչ Ջորջ Բալանչին՝ Հայաստանի պարի պետական համույթի ելույթը դիտելուց հետո:

ՀՀ Պարի պետական համույթի կենսագրության էջերն ինքնատիպ են ու անմոռաց: 1968 թ.-ին համույթի գեղարվեստական ղեկավարի և գլխավոր բալետմեյստերի պաշտոնն ստանձնում է Վանուշ Խանամիրյանը: Համույթ գալով դասական բալետից՝ շուտով նա առաջինն է արժանանում հանրապետության ժողովրդական արտիստի կոչման: Արվեստասերների հիշողության մեջ դեռևս թարմ են Խանամիրյանի մարմնավորած կերպարները՝ Ներսես, Սասունցի Դավիթ, Գիրեյ, Սպարտակ, Լոռեցի Սաքո, Գոռ, արքայազն Հանս և այլն: Սասունցի Դավիթն, օրինակ, դասական և ազգային պարերի բարձրարժեք համադրություն-մանրանկար էր, որն արտիստին ճանաչում բերեց: Ժամանակի մեծագույն քանդակագործ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ Երվանդ Քոչարը Սասունցի Դավթի արձանի կերտման համար բնորդ է ընտրում պարարվեստի երիտասարդ վարպետին: Դիտելով Խանամիրյանի պարային կատարումը՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գալինա Ուլանովան ասել է. «Ուժեղ է, ինչպես ժողովուրդը...»: Թեև դասական բալետից անցումը ժողովրդական պարարվեստին կատարվեց պատահականորեն, սակայն դա, անշուշտ, նախապես խմորվել էր արտիստի հոգում:

Հիշարժան են նրա «Բերդ», «Սարդարապատ», «Հոտաղների պարը», «Կինտոների պարը», «Պատկերներ հին Երևանից», «Կակաչներ», «Էնզելի», «Քոչարի», «Սուսերով պար» բեմականացումները: Վ. Խանամիրյանի տաղանդի, ջանքերի և անմնացորդ նվիրման շնորհիվ է, որ տարիներ շարունակ Պարի պետական համույթը արժանացել է մասնագետների և հանդիսականների բարձր գնահատանքին: «Կինտոների պարը» պարերի զարդն էր, էնզելու գործած գորգը դեռ չի խամրել ժողովրդի հիշողության մեջ. մեղմորեն, հանդիսավոր նազում են աղջիկները, և այդ նազանքի մեջ օրորոց, զգացմունք, օջախի ծուխ կա: Խանամիրյանի համար պարարվեստը մշտապես նվիրական ակունք է եղել: Հիշենք «Կակաչները», որ հոգու և կակաչների երանգների խճանկար է, կամ «Սուսերով պարը», որ, հաղթանակի պար լինելով, մարդկային հոգում սիրո ընկալումը հասցրեց վեհության:

1996 թ.-ին Ֆրանսիայի Մարսել քաղաքում հանդիպեցի հայկական պարարվեստի արքա Վանուշ Խանամիրյանին. «Ժակ» երիտասարդական խմբի հրավերով նա բեմադրություն էր կազմակերպում տեղի պարային խմբի հետ: Աչքերում մեծ կարոտ կար: «Մեկ ամիս է, ինչ Հայաստանից հեռու եմ. սիրտս պայթում է, ուզում եմ շուտ վերադառնալ, շատ եմ ուզում գործ անել, շա՜տ-շա՜տ եմ ուզում»: Այդ օրվանից անցել է տասնմեկ տարի, բայց նույն եռացող արյունն է հոսում երակներում, նույն եռանդն է մղում աշխատելու, իսկ նրա բոլոր բեմադրություններում տրոփում է արվեստագետի սիրտը, միշտ որոնող ու գեղեցիկը հայտնաբերող միտքը:

Նոյեմբերի 5-ին Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ ժողովրդական արտիստ Վ. Խանամիրյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսություն: «Սպարտակ» բալետի հնչյունների ներքո բացվեց վարագույրը. բեմում արտիստն էր. նա նույն վարպետությամբ ներկայացրեց իր մարմնավորած կերպարները:

Հանդիսության ավարտից անմիջապես հետո զրուցեցի հոբելյարի, նրա գործընկերների և մտերիմների հետ:

Զեմֆիրա Երիցյան (Երևանի Թատրոնի և կինոյի


«Սպարտակ»

պետական ինստիտուտի դասախոս, պրոֆեսոր). «Ելույթ ունեցավ պետական մրցանակի դափնեկիր, ՀԽՍՀ Պարի վաստակավոր կոլեկտիվը, գեղարվեստական ղեկավար և գլխավոր բալետմեյստեր՝ Վանուշ Խանամիրյան». շուրջ քսանհինգ տարի ամենուր որոտընդոստ ծափահարություններով են ընդունել այս հայտարարությունը: Մեր համատեղ աշխատանքը դարձավ աշխարհասփյուռ հայության հպարտությունը՝ կարոտի արցունքներ քամելով բազմաթիվ տարագիր հայերի աչքերից: Արտասահմանյան երկրներում ունեցած համերգները ավելի ճանաչելի դարձրին մեր հնամենի երկիրն ու մշակույթը, մասնավորապես պարարվեստը: Վ. Խանամիրյանի ղեկավարած կոլեկտիվը դարձավ մեր լեռնաշխարհի ամենաերիտասարդ «դիվանագետը»: Նրա բեմադրություններից շատերը դարձան հայ պարարվեստի դասական նմուշներ՝ մտնելով ոսկե ֆոնդ և լեգենդ դարձնելով Վ. Խանամիրյանին: Նրա սաները ևս աշխարհի տարբեր երկրներում ուսուցանում են հայ ժողովրդի մշակույթի դրսևորումներից մեկը՝ ժողովրդական պարարվեստը: Հավատարիմ մնալով ավանդականին՝ Վ. Խանամիրյանը պարը դարձրեց ավելի գունագեղ ու բազմաբովանդակ: Մենք սիրով ու խանդաղատանքով ենք հիշում մեր անցած ճանապարհը, որի համար երախտապարտ ենք վարպետին՝ խոնարհվելով նրա անձի և արվեստի առաջ»:

Մերուժան Սահակյան (ԵԹԿՊԻ դասախոս, պրոֆեսոր). «Վ. Խանամիրյանի հետ աշխատել եմ երիտասարդ ժամանակ Օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում. միասին բազմաթիվ ներկայացումներում ենք խաղացել: Շատ հուշեր կան... Հիշում եմ մի դեպք. «Սպարտակ» բալետի երկրորդ գործողությունն էր, Խանամիրյանը փայլում էր Սպարտակի դերում՝ հպարտ կեցվածքով բեմում կանգնած: Այդ պահին Հարմոդիուսի դերակատարը թուրն իջեցրեց և հատակին հարվածելու փոխարեն պատահաբար խփեց Վանիկի ոտքին. արյունն առատորեն հորդեց: Խանամիրյանի աչքերից կրակ էր թափվում, անակնկալ ցավից քարացել էր, բայց շարունակեց պարել: Վարագույրը փակվելուն պես ուշաթափ ընկավ մեր ձեռքերին»:

Աննա Կարապետյան (մենապարուհի, ԵԹԿՊԻ դասախոս). «Ծնողներս պարել են պրն. Խանամիրյանի ղեկավարած խմբում. երեք տարեկանից եղել եմ նրանց փորձերի և համերգների լուռ վկան՝ ուշադրությամբ հետևելով պարային ամեն մի շարժման: Երբ լսում եմ հորս՝ Ռաշիդ Կարապետյանի պատմած հուշերը, զգում եմ՝ ինչ ակնածանք են ունեցել իրենց ղեկավարի նկատմամբ: Թատրոնի դերասանները հպարտությամբ են նշում, որ տեսել են Վ. Փափազյանին, Հ. Ներսիսյանին, շփվել նրանց հետ, մենք էլ հպարտ ենք, որ Վ. Խանամիրյանի կողքին ենք եղել, նրանից սովորել և դեռ շատ բան ունենք սովորելու...»:

Լյուդվիգ Պողոսյան (Պարարվեստի գործիչների միության անդամ). «Բարդ իրավիճակներում Խանամիրյանը լավատեսորեն էր տրամադրվում՝ ասելով՝ «Մութ ամպերի միջից միշտ արևը տեսեք»:

Վերջապես մոտենում եմ հոբելյարին:

Մարինե Մխիթարյան - Պարոն Խանամիրյան, ինչպե՞ս որոշեցիք մտնել Պարի պետական համույթ: Ինչու՞ հատկապես Ձեզ առաջարկվեց գեղարվեստական ղեկավարի պաշտոնը:

Վանուշ Խանամիրյան - Իմ հաջողությունը պայմանավորված է նաև նրանով, որ երբեք իմ թիկունքում ոչ ոք չի եղել: Ինքս եմ ինձ սատարել: Երբ բալետից տեղափոխվեցի Պարի պետական համույթ, թերթերը գրեցին. «Վանուշը գնաց, որ Պարի պետական համույթը բալետ դարձնի». իբր բալետն այդքան հեշտ է:

Մ. Մ. - Ձեր սաները հաճախ են կրկնում Ձեր խոսքը. «Վատ պարողներին ինչ-որ բան խանգարում է»:

Վ. Խ. - Ինձ երբեք ոչինչ չի խանգարել: Եղել են դժվար ժամանակներ: Օրինակ՝ «Ձվարթնոց»-ում Հ. Բեկնազարյանը «Դավիթ Բեկ» պատմահերոսական ֆիլմն էր նկարահանում. զբաղված էին Վաղարշ Վաղարշյանը, Հրաչյա Ներսիսյանը, Ֆրունզե Դովլաթյանը: Նկարահանման հրապարակ հասնելու համար նրանց վարորդ էր հարկավոր: Ես աշխատեցի և երջանիկ էի, որ նրանց կողքին եմ, հետո նորից վերադարձա բեմ: Հիշում եմ՝ 1938 թվականին Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի պրեմիերան տեղի ունեցավ հենց այս դահլիճում: Չկային ոչ նստարաններ, ոչ աթոռներ. մարդիկ նստել էին փռած թերթերի վրա: Պրեմիերայից հետո մեկնեցինք Մոսկվա՝ առաջին հյուրախաղերին. 12-ամյա պատանի էի, երբ պարեցի Մոսկվայի Մեծ թատրոնի բեմում:

Մ. Մ. - Լավ արվեստագետ լինելուց բացի՝ նաև լավ մարդ եք. այդ մասին են վկայում Ձեր մտերիմների հետ ունեցած զրույցները. բոլորը ջերմորեն ու հաճույքով են խոսում Ձեր մասին: Ինչո՞վ է դա պայմանավորված:

Վ. Խ. - Մարդ պետք է հոգով ու սրտով ազնիվ և մաքուր լինի: Երբեք իրեն չպիտի գերադասի այլ մարդկանց: Ես բոլորի հետ էլ ազնիվ ու շիտակ եմ վարվում: Որքան մեծացա, այնքան հասարակ դարձա: 28 տարի պարել եմ Օպերայի և բալետի թատրոնում, չկա դեր, որ կատարած չլինեմ: Ժողովրդի մեջ էլ են պահպանվել այդ վառ հիշողությունները: Ձեք պատկերացնում՝ ինչ է կատարվում, երբ քայլում եմ փողոցով: Ինչպե՞ս են շրջապատում ինձ, զրույցի բռնվում: Սիրում եմ լինել ժողովրդիս մեջ, զրուցել մարդկանց հետ:

ՄԱՐԻՆԵ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Երևանի Թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի դասախոս, դերասանուհի

Հոգեւոր

ՍՈՒՐԲ ԴԻՈՆԻՍԻՈՍ ԱՐԻՈՊԱԳԱՑՈՒ ՎԱՐՔԸ

Սուրբ Դիոնիսիոսին ծնողները նվիրել էին Աթենքում կուռքերին զոհաբերվելու համար: Երբ քրմապետը տեսնում է տղայի գեղեցկությունն ու համեստությունը, ուշիմությունն ու լռակյացությունը, հանձնարարում է նրան չզոհել:

Երբ նրան ուսուցանում են աթենացի իմաստունների հանճարեղ մտքերը, ա՛ռագ հմտանալով՝ վարդապետական ճոխությամբ նստում է Արիոպագայի աթոռին, դառնում աթենացիների առաջնորդ:

Սուրբ Դիոնիսիոս Արիոպագացին աթենացի նախարարներից մեկն էր, իմաստուն անձնավորություն: Ահա այս երանելի Դիոնիսիոսը Քրիստոսի խաչելության օրը տեսնում է արեգակի խավարումը, զգում երկրի շարժումը, քանզի բացվում են գերեզմանները, և քաղաքի շատ ամրություններ են կործանվում: Իմաստնությամբ ուսումնասիրում է աստղագիտությունը՝ պարզելով, որ արեգակի խավարման ժամանակը չէ: Ուստի Աթենքում կանգնեցնում է մի բագին՝ գրելով. «Այս բագինն անծանոթ աստծունն է»:

Պողոս առաքյալի քարոզչության և հրաշքներ գործելու ժամանակ բերում են մի կույրի, որ առաքյալը վերադարձնի նրա աչքերի լույսը: Այդ պահին Դիոնիսիոսը, որ քաղաքի գլխավորն էր, ասում է Պողոս առաքյալին. «Մի՛ մոտեցիր և ձեռք մի՛ տուր նրան, այլ հեռու՛ մնա և ասա՛. «Բացվի՛ր Քրիստոսի անունով», և եթե կույրը տեսնի, կհավատանք նրան, ում դու քարոզում ես»: Պողոս առաքյալը պատասխանում է. «Դու՛ ասա այդ խոսքը և տե՛ս Աստծո զորությունը»: Այդժամ Դիոնիսիոսը դեռևս չձևավորված հավատով ասում է. «Ով կույր, թող աչքերդ բացվեն Քրիստոսի անունով», և նույն պահին բացվում են կույրի աչքերը: Դիոնիսիոսը հավատում է Քրիստոսին՝ դառնալով Նրա հավատքի ջատագով, ուղղափառության վարդապետ և ճշմարտության քարոզիչ, նրա հետ էլ հավատում է ողջ քաղաքը, ինչպես գրել է Ղուկաս Ավետարանիչը «Գործք առաքելոց»-ում:

Սրանից հետո քաղաքագլուխ Դիոնիսիոսը ձեռնադրվում է Աթենքի եպիսկոպոս, բազում գրքեր է գրում՝ պատմելով հրեշտակների, երկնային կարգի ինը դասերի, եկեղեցականների կարգի և ուղղափառ հավատքի մասին: Գրքերն այդ պահում է գրապահոցում, սակայն հելլեն կռապաշտները նախանձով են լցվում սրբի հանդեպ՝ հրկիզելով նրան և նրա 10 հատոր գրքերը. միայն երեք գիրք է մնում հավատացյալների մոտ՝ «Աստվածաշունչ» մատյանին վերաբերող, որոնք էլ այժմ պահպանված են եկեղեցում:

Դիոնիսիոսը մեզ ավանդեց ուղղափառ հավատքի դավանությունը, սուրբ եկեղեցու կարգը և երկնայինների քահանայության ձեռնադրությունը, որ սովորեց Պողոս առաքյալից և գրավոր փոխանցեց Քրիստոսին հավատացողներին:

Գրաբարից փոխադրեց
ԽՈՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Տոնացույց
Նոյեմբերի 10 - Տոն սուրբ հրեշտակապետերի

Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների հիշատակի տոն

Քրիստոսի համբարձումից հետո նրա առաքյալները տարբեր երկրներ են մեկնում՝ Տիրոջ վարդապետությունը քարոզելու համար՝ հիմնելով քրիստոնեական համայնքներ և եպիսկոպոսական աթոռներ: Հայաստանում Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները հիմնում են Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցին:

Մ. Խորենացին և հայկական մյուս աղբյուրները վկայում են, որ Թադեոս առաքյալը Ավետարանի լույսը տարածել է Հայաստանի տարբեր բնակավայրերում՝ քրիստոնյա դարձնելով բազմաթիվ հայերի, այդ թվում՝ Սանդուխտ արքայադստերը, և հետագայում նրա նահատակության վայրում կառուցվել է Ս. Թադեի վանքը: Հայաստանում Թադեոսի հիմնած աթոռներից է Արտազի աթոռը, ըստ ավանդության՝ նաև Սյունիքի աթոռը:

Ս. Բարդուղիմեոս առաքյալը Քրիստոսի 12 առաքյալներից մեկն է, ում մասին Տերն ասել է. «Ահա արդարև իսրայելցի, որի մեջ չկա նենգություն» (Հովհ., Ա., 47): Նա առաջինն էր, ով Հիսուսին անվանեց Աստծո որդի և կոչվեց «նախադավան»: Շարադրելով Սյունիքի պատմությունը՝ Ստ. Օրբելյանը նշում է. «Հայերից նախ հավատացյալ դարձան սյունեցիները, որոնք սուրբ Ավետարանին հնազանդվեցին Բարդուղիմեոս սուրբ առաքյալի միջոցով»: Իր քարոզչական գործունեությունը ծավալելով Պարսկաստանից մինչև Հնդկաստան՝ առաքյալն այնուհետև գալիս է Հայաստան՝ Արտաշատ բլրի վրա հանդիպելով Թադեոս առաքյալին: Սանատրուկ թագավորի հրամանով առաքյալը նահատակվում է փշոտ մահակների հարվածներից: Պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Աղբակ գավառում հայտնի է Ս. Բարդուղիմեոսի վանքը՝ կառուցված սրբի գերեզմանի վրա: Ըստ Ստ. Օրբելյանի՝ Բարդուղիմեոս առաքյալը եպիսկոպոսական աթոռ է հիմնել Գողթնում:

Ս. Բարդուղիմեոս և Ս. Թադեոս առաքյալների տոնը Հայաստանյայց առաքելական եկեղեցին տոնում է հիսնակի առաջին կիրակիի հաջորդ շաբաթ օրը՝ նոյեմբերին կամ դեկտեմբերին:

Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնի խորհուրդը, սրբերի հիշատակի տոն և նրանց ուղղված բարեխոսական հայց լինելով, միևնույն ժամանակ հայկական եկեղեցու ծննդյան հիշատակությունն ու փառաբանությունն է:

Թադեոսին և Բարդուղիմեոսին՝ որպես Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հիմնադիրների, նվիրվել են բազմաթիվ ճառեր, գանձեր, տաղեր ու աղոթքներ: Միջնադարյան կերպարվեստում Թադեոսը սովորաբար պատկերվել է մի ձեռքում դաշույն, որը խորհրդանշում է դրանով սպանված լինելը, իսկ մյուսում՝ Հիսուսի կողը խոցած գեղարդը, որն, ըստ ավանդության, սուրբն իր հետ բերել է Հայաստան: Սկզբում այն պահվել է Այրիվանքում, որի պատճառով էլ հետագայում վանքը կոչվել է Ս. Գեղարդ, իսկ այժմ պահվում է Ս. Էջմիածնում:

Ս. Բարդուղիմեոսը հայ միջնադարյան կերպարվեստում պատկերվել է մի ձեռքում դաշույն, մյուս ձեռքում՝ Տիրամոր պատկերը, որն, ըստ ավանդության, իր հետ բերել է Հայաստան:

Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալներն ըստ էության նաև հայ ժողովրդի առաջին ուսուցիչները դարձան, և պատահական չէ, որ երջանկահիշատակ Գարեգին Ա հայրապետը նրանց տոնի օրը հաստատեց որպես Կրոնի ուսուցիչների օր: Ամեն տարի այս տոնի օրը Մայր աթոռ Ս. Էջմիածնում անցկացվում է կրոնի ուսուցիչների ամենամյա հավաք:

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու,
Հայաստանի Հանրապետության պետական
տոներ, հիշատակի օրեր» գրքից

ԲԱՐԵՊԱՇՏ ՔՐԻՍՏՈՆՅԱ

Խաչակնքվելու խորհուրդն ու կարգը

Սիրելի՛ ընթերցողներ, «Իրավունք» մշակույթ» երկշաբաթաթերթն այսուհետ նոր խորագրի ներքո՝ «ԲԱՐԵՊԱՇՏՔՐԻՍՏՈՆՅԱ», ձեզ կներկայանցի ճշմարիտ քրիստոնյային վայել պահվածքի սկզբունքները, քրիստոնեական ծեսերի խոր հուրդներն ու կարգերը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ ամենայն հայոց կաթողիկոսի հայրապետությամբ և Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ 2001 թ. հրատարակված «Քրիստոնեական» գրքից:

Խաչակնքման սովորությունն այնքան հին է, որքան քրիստոնեությունը, և հատուկ է բոլոր ուղղափառ եկեղեցիներին: Հին աշխարհում և Հռոմեական կայսրությունում խաչը համարվում էր անարգ մահվան, նախատինքի, չարչարանքների միջոց: Քրիստոս, գամվելով մահվան խաչին, մեր փոխարեն հանձն առավ մահը, կրեց առամական մեղքի անեծքը և մահվան գործիքն իր զորությամբ վերափոխեց հավիտենական կյանքի խորհրդանիշի: Առաքելական շրջանում՝ մանավանդ 1-2-րդ դարերում, հալածանքների ժամանակ հավատացյալներն իրար հետ ծանոթանում էին «կուրծքը խաչակնքելով»: Ահա ինչու թե՛ հնում և թե՛ այսօր բոլոր ճշմարիտ քրիստոնյաները խաչակնքվում են աղոթքի սկզբում և վերջում, եկեղեցի մտնելիս և ելնելիս, սրբություններին մոտենալիս, փողոց դուրս գալիս, որևէ աշխատանք սկսելիս և այլ պատեհ առիթներով:

Խաչակնքվելն ամուր վահան է ընդդեմ դիվական ներգործությունների: «Եթե դու ջերմեռանդությամբ խաչակնքվես, ապա ոչ մի չար ոգի չի կարող քեզ մոտենալ, որովհետև նա կտեսնի այն զենքը (խաչը), որով Հիսուս Քրիստոս մահացու խոցեց նրան և կործանեց սատանայի ու նրա արբանյակների չար զորությունը»,- գրում է Ս. Հովհան Ոսկեբերանը:

Խաչակնքելով մենք հիշում ենք Տեր Հիսուս Քրիստոսի փրկարար մահը խաչի վրա, հայցում ենք նրա օգնությունը, ողորմությունն ու օրհնությունը, քանզի խաչի զորությունը Քրիստոսն է: Պողոս առաքյալն ասում է. «Մեզ՝ փրկվածներիս համար խաչի զորությունը Աստծո զորությունն է» (Ա Կորնթ. Ա :18):



Խաչակնքվելը նշանակում է մեր հին, մեղավոր էության դատապարտում և նոր, անմեղ էության ծնունդ կամ Ադամի մահ և Քրիստոսի ծնունդ, հին մարդու վերջ և նոր մարդու սկիզբ:

Առաքելական շրջանի նախնի եկեղեցում տարածված էր մի շատ ծանոթ երգ, որն ամբողջությամբ պահպանվել է Պողոս առաքյալի՝ եփեսացիներին ուղղված նամակում. «Վե՛ր կաց դու, որ նինջում ես, կանգնի՛ր մեռելների միջից, և Քրիստոս պիտի լուսավորի քեզ» (Եփես. 5 : 14):

Խաչակնքվում ենք հետևյալ կերպ. միացնում ենք աջ ձեռքի երեք մատները (բթամատ, ցուցամատ և միջնամատ), հպում ճակատին՝ ասելով «յանուն Հօր», իջեցնում կրծքին՝ ասելով «և Որդւոյ», տանում կրծքի ձախ կողմը՝ ասելով «և Հոգւոյն», ապա կրծքի աջ կողմը՝ ասելով «Սրբոյ», և դնում կրծքի վրա՝ «Ամէն»: Մյուս երկու մատները (ճկույթը և մատնեմատը) միասին սեղմում ենք ափին, որը խորհրդանշում է, որ Քրիստոս կատարյալ Աստված է և կատարյալ մարդ:

Խաչակնքվելիս հարկավոր է գլուխը փոքր-ինչ խոնարհել, որով մեր հնազանդությունն ենք արտահայտում Աստծուն:

Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ երբ ձեռքը տանում ենք դեպի վեր, ուզում ենք ասել, որ մեր միտքը, էությունը գամվեց խաչին, և թող այսուհետ Քրիստոսի միտքը գրավի մեզ:

Երբ ձեռքը տանում ենք դեպի ներքև, ուզում ենք ասել, որ մեր մարմինը չէ, որ պիտի թելադրի մեզ (այն մեռավ խաչի վրա), այլ թող Քրիստոս թելադրի մեզ իր կամքը:

Ձախ և աջ տանելով՝ ուզում ենք ասել, որ մեր ձեռքերը նույնպես խաչվեցին, որոնք չար գործերի համար արդեն անպիտան են և պիտի միայն բարին գործեն:

Ձեռքը բացած տանելով դեպի սիրտը և ասելով «Ամեն»՝ հաստատում ենք և համաձայնում այդ ամենին («ամեն» եբրայերեն բառ է, որ նշանակում է «թող այդպես լինի», «ճշմարիտ է»):

Ի դեպ, հայերենում «խաչակնքվել» բառն ինքնին ճիշտ է արտահայտում իմաստը՝ խաչ և կնքվել, խաչի կնիքը դնել մեզ վրա, այսինքն՝ կնքվել Ավետարանի ողջ ճշմարտությամբ, իսկ կնքվողը պատկանում է կնքողին՝ Աստծուն:

ՏԵՂԵԿՈՒՅԹ - ԱԶԴ - ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այցելե՛ք Մարդու իրավունքների գրադարաններ

Մարդու իրավունքների գրադարանային ցանցը (ՄԻԳՑ) ընդգրկում է Հայաստանի Հանրապետության հինգ մարզեր: Մարդու իրավունքների գրադարանները կարևոր տեղեկատվական և գիտական բազա են հանդիսանում ընթերցասեր բնակչության համար և գործում են Վանաձոր, Դիլիջան, Հրազդան, Արտաշատ, Գավառ և Սևան քաղաքներում:

Գրադարանային ֆոնդը պարբերաբար թարմացվում է ընթերցողների (ուսանողներ, դասախոսներ, ուսուցիչներ, ՀԿ անդամներ, աշակերտներ և այլք) պահանջներին համապատասխան գրականությամբ: Գրականությունը հիմնականում հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով է: Յուրաքանչյուր ամիս Մարդու իրավունքների գրադարանների ծառայություններից օգտվում է միջին հաշվով 300-400 մարդ:

Գրադարաններում մատուցվում են հետևյալ ծառայությունները.

- բաժանորդային ծառայություն
- ընթերցասրահի ծառայություն
- պարբերական մամուլի ծառայություն
- պատճենահանման ծառայություն
- տեսադարանի ծառայություն
- «Իրտեկ» ծառայություն

Գրադարանները գործում են անվճար հիմունքներով: Ընթերցողները հնարավորություն ունեն գրքեր վերցնել 10-օրյա ժամկետով (այլ համայնքներից եկած ընթերցողների համար ժամկետը երկու ամիս է), ընթերցասրահում օգտվել հանրագիտարաններից, բառարաններից և այլ տեղեկատուներից ու ուղեցույցներից, ինչպես նաև տեղում 3 էջ անվճար պատճենահանել անհրաժեշտ գրականությունից: Ընթերցասրահը հնարավորություն է ընձեռում ծանոթանալ հանրապետական և տեղական մամուլին («Ազգ», «Առավոտ», «Հայաստանի Հանրապետություն», «Իրավունք», «Կրթություն», «Լոռու մարզ», «Քրիստոնյա Հայաստան», «Հայրենիք և եկեղեցի», «Իրավական մշակույթ», «Аргументы и факты»):

«ԻՐՏԵԿ» իրավական տեղեկատվական որոնողական համակարգն իրենից ներկայացնում է համակարգիչ ներմուծված տվյալների բազա, որը ներառում է Հայաստանի Հանրապետության ամբողջ օրենսդրությունը՝ օրենսգրքերը, օրենքները, ՀՀ նախագահի, կառավարության, նախարարությունների, Ազգային ժողովի, Սահմանադրական դատարանի 1991 թ.-ից ի վեր ընդունած բոլոր որոշումները և օրենսդրական ակտերը: Վանաձորի Մարդու իրավունքների գրադարանում կա նաև ձայնադարանի և տեսադարանի բաժին: Այն հիմնականում բաղկացած է ՄԱԿ-ի և Մարդու իրավունքների վերաբերյալ թեմատիկ ֆիլմերից և ձայներիզներից, և արդեն ավանդույթ է դարձել յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրը թեմատիկ ֆիլմերի ցուցադրում կազմակերպելը:

Գրադարանների հասցեներն են.

Վանաձորի Մարդու իրավունքների գրադարան
ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ (+374 322)2-29-67; 4-47-81, հեռապատճեն՝ (+374 322) 4-47-81
E-mail: hrlibrary@acrpc.am,
Գրադարանի աշխատանքային ժամերն են ժ. 9.00-17.30 (շաբաթ օրը՝ 10.00-16.30)
հանգստյան օրը՝ կիրակի

Դիլիջանի Մարդու իրավունքների գրադարան
ՀՀ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 59, կենտրոնական գրադարան
Հեռ.՝ (374 2680) 73-37
E-mail: dilijan@acrpc.am

Սևանի Մարդու իրավունքների գրադարան
ՀՀ, ք. Սևան, Սևանեցու 4
Հեռ.՝ (+374 261) 2-22-35
E-mail: sevan@acrpc.am

Հրազդանի Մարդու իրավունքների գրադարան
ՀՀ, ք. Հրազդան,Կենտրոն 4-րդ մասնաշենք, 401
Հեռ. (+374 223) 2-84-42
E-mail: acrpc@mail.ru

Գավառի Մարդու իրավունքների գրադարան
ՀՀ, ք. Գավառ, Ազատության 1
Հեռ.՝ (+374 264) 2-24-66
E-mail: astgh-zvezda@rambler.ru

Արտաշատի Մարդու իրավունքների գրադարան
ՀՀ, ք. Արտաշատ, Շահումյան 25
Հեռ.՝ (+374 235) 2-26-02
E-mail: artashat@acrpc.am

Վարսիկ Մեսրոպյան
Մարդու իրավունքների գրադարանային ցանցի համակարգող

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

Աստծո և օրենքի առաջ հավասար են բոլորը...

«Իրավական մշակույթ» թերթին է դիմել Վանաձոր քաղաքի բնակիչ, առաջին խմբի հաշմանդամ Հովակիմ Փափազյանը: Քայլելու կարողությունից զրկված և միայն սայլակի օգնությամբ տեղաշարժվող Հ. Փափազյանը հայտնում է, որ ակամա նստակյաց կյանքի պարտադրանքի դժվարություններն ավելի են սրվում սոցիալական խնդիրների, ոչ պատշաճ կենսամակարդակի պատճառով: Հացով գոյատևելու խնդրի առաջ կանգնած Հ. Փափազյանը, բնականաբար, ի վիճակի չէ նաև գազի, ջրի, էլեկտրաէներգիայի վարձավճարները մուծել, իսկ կապի միակ միջոց հանդիսացող հեռախոսի կուտակվող վարձավճարը չմուծելու դեպքում մարդկանց հետ հաղորդակցվելու այդ միջոցից ևս զրկում են:

Կենսականորեն կարևոր այս խնդիրներին գումարվում է ծմռան սպառնացող ցուրտն ու վերանորոգման կարիք ունեցող տանիքից կաթող ջուրը:

Դիմում ենք բոլոր այն անձանց ու գործարարներին, ովքեր կարող են օգնել կենսապայմանների հետևանքով շարժունակությունից զրկված, նյութական աջակցության կարիք զգացող Հ. Փափազյանին:

Դիմել՝ ՀՀ, ք. Վանաձոր, Կամոյի փող., տուն 38
Հեռ. +374 (322) 2-63-56

Ուղղում

«Իրավական մշակույթ» թերթի 12-րդ համարում Ռոբերտ Գրիգորյան-Էջանանցու «Գյուղական դպրոցը դասարանակազմության և իրավունքի թնջուկում» հոդվածի «...գյուղական ուսուցման բարեփոխիչ վերակառուցումը անհեթեթություն է» արտահայտության փոխարեն կարդալ՝ «...գյուղական ուսուցման բարեփոխիչ վերակառուցումը առաջնահերթություն է»: Սխալի համար հայցում ենք հեղինակի և ընթերցողների ներողամտությունը:

Խմբագրություն

Մենք՝ քաղաքացիական հասարակությունը

Հարգելի՛ հասարակական կազմակերպություններ,

«Իրավական մշակույթ» երկշաբաթերթը «Մենք՝ քաղաքացիական հասարակությունը» խորագրի ներքո պարբերաբար ներկայացնում է Հայաստանում գործող հասարակական կազմակերպություններին: ՀԿ-ները հնարավորության դեպքում ներկայացվում են ըստ մարզերի, այբբենական կարգով: Տվյալ մարզից այբբենական հաջորդականությանը համապատասխան որևէ ՀԿ-ի մասին տեղեկույթ չլինելու դեպքում տպագրվում է հաջորդ մարզից առաջինը պատշաճ տեղեկույթ ներկայացրած ՀԿ-ն:

Եթե ցանկանում եք՝ ձեր կազմակերպությունը ներկայացվի «Իրավական մշակույթ» թերթում, ապա խնդրում ենք ուղարկել անսխալ խմբագրված տեղեկույթ ձեր հասարակական կազմակերպության, նրա առաքելության, նախատեսվող և իրականացված ծրագրերի, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների մասին:

Տեղեկույթը պետք է լինի էլեկտրոնային տարբերակով, 1-1,5 A4 էջի սահմաններում՝ Arial Armenian 10 տառաչափով: Ուղարկեցե՛ք նաև 1-2 լուսանկար 300 dpi խտությամբ:

Հայտարարություն

Հարգելի՛ ընթերցողներ, հայտնում ենք ձեզ, որ տպագրության է պատրաստվում «Վասն արդարութեան» գիտամեթոդական հանդեսի հերթական համարը:

Հրավիրում ենք իրավաբանական ֆակուլտետների, բուհերի դասախոսներին, բարձր կուրսերի ուսանողներին՝ իրավունքներին, մարդու իրավունքներին առնչվող թեմաներով գիտական, վերլուծական հոդվածներ ներկայացնել: Գիտականության չափանիշներին համապատասխանող հոդվածները, աշխատանքները կտպագրվեն հանդեսում՝ պարգևատրվելով հոնորարներով:

Հոդվածները կարելի է ուղարկել «Վասն արդարութեան» գիտամեթոդական հանդեսի խմբագրությանը հետևյալ հասցեով՝

ՀՀ, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
Հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am Համացանցի էջ՝ www.acrpc.am

Հարգելի՛ ընթերցող, եթե ցանկանում եք Ձեր դիտարկումներով օգնել «Իրավական մշակույթ» երկշաբաթաթերթի առավել արդյունավետ ու նպատակային աշխատանքին, խնդրում ենք լրացնել սույն ձևաթերթիկը և ուղարկել խմբագրություն: Ձեզնից ընդամենը պահանջվում է՝ լինել անաչառ և արագ արձագանքել: Կանխավ շնորհակալ ենք:

1. Ըստ Ձեզ՝ մեր հասարակության մեջ զարգացա՞ծ է իրավական մշակույթը:
   Ոչ Մասամբ Այո
2. Հասարակությունն իրազե՞կ է Մարդու իրավունքներին:
   Ոչ Մասամբ Այո
3. Թերթը խրախուսո՞ւմ է մարդու իրավունքների պաշտպանությունը:
   Չի խրախուսում Մասամբ Խրախուսում է
4. Թերթն արծարծո՞ւմ է հասարակությանը հուզող հարցեր:
   Ոչ Մասամբ Այո
5. Ի՞նչ թեմաների շուրջ հոդվածներ կցանկանայիք կարդալ մեր թերթի էջերում:

_____

_____

Կարող եք լրացնել նաև Ձեր տվյալները՝

անուն, ազգանուն _____ հասցե _____

հեռախոս _____ էլ. փոստ _____

Սիրելի՛ ընթերցող, լրացված ձևաթերթիկը խնդրում ենք ուղարկել ՀՍԻԿ գրասենյակ՝ ՀՀ, Լոռու մարզ, Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2 հասցեով: Կարելի է պատասխաններն ուղարկել նաև էլ. փոստով՝ lc@acrpc.am կամ հեռապատճենով՝ +374(322) 4-47-81:

Թերթը հրատարակվում է Եվրոպական հանձնաժողովի ֆինանսական օժանդակությամբ: Բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես Եվրոպական հանձնաժողովի դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության Գ տարի
Հիմնադիր և հրատարակիչ՝ Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002, ք. Վանաձոր, Շիրակացու 1-ին նրբ., թիվ 2
Հեռ.՝ +374 (322) 2-29-67
հեռապատճեն՝ +374 (322) 4-47-81
էլ. փոստ՝ acrpc@acrpc.am; lc@acrpc.am
Համացանցի էջ՝ www.acrpc.am

Գլխավոր խմբագիր պաշտոնակատար՝ Գևորգ Մանուկյան
Խմբագիր՝ Հերմինե Բաբուռյան
Համակարգչային ձևավորող՝ Արմեն Սահակյան
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեջբերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթին» պարտադիր է:
Հրապարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել խմբագրության կարծիքին:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Ստորագրված է տպագրության 2007թ.11.14:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «Շանգակ-97» հրատարակչատանը:

Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար